


ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ. Հայ գրականություն, գիրք յոթերորդ, Երևան, «Տիգրան Մեծ», 2023, 580 էջ*:

Բանալի բառեր՝ Դավիթ Գասպարյան, հայ գրականություն, գրական քննադատություն, ուսումնասիրություն, Րաֆֆի, Դուրյան, Համասարեղ, Սևակ, սրախինյան բռնություն, հայկական վերածնունդ:

Դավիթ Գասպարյանն ահա արդեն հինգ տասնամյակից ավելի իրեն դրսևորում է գրականագիտության տարբեր բնագավառներում՝ որպես գրականության պատմաբան, գրական քննադատ, տեսաբան, աղբյուրագետ:



Դրա վկայությունը նրա բազմաթիվ գրքերն են՝ մենագրություններ, գրականության պատմություններ, տեսական հիմնահարցեր, դասական գրողների անտիպ ժառանգության, նրանց նվիրված անտիպ հուշերի հրապարակումներ, որոնք ընդունվել են որպես հայագիտության այդ բնագավառի հաստատուն հենակետեր:

Ահա լույս է տեսել նրա «Հայ գրականություն» մատենաշարի յոթերորդ գիրքը: Սա լուրջ ու ծանրակշիռ վաստակ է՝ հագեցած նորանոր գրականագիտական պրպտումներով, որոնք էլ Դ. Գասպարյանի վերլուծականները դարձնում են թարմ ու հետաքրքրական:

Ստեղծագործական աշխատանքի բնույթը, մտածողության ձևը, շարադրանքի լեզուն համատեղ ձևավորում են նրա գրականագիտական ոճը: Այդ ոճի գլխավոր բաղադրիչը նյութի համակարգային ու համադրական ամբողջական քննությունն է՝ լինի ծավալուն ուսումնասիրություն թե համեմատաբար փոքր հոդված: Այստեղ և՛ ուսումնասիրվող հեղինակի կենսագրությունն է ու ժամանակը, և՛ վերլուծվող երկի ստեղծագործական պատմությունն ու լրացուցիչ հանգամանքները, և՛ մամուլի ու արխիվային նյութերի տվյալները, և՛ հուշերն ու այլապես վկայություններ, և՛ նախորդող վերլուծականները, գրքերը, վեճերն ու բանավեճերը: Ոչ մի մանրամասն չի անտեսվում, ամեն ինչ նպաստում է գրականագետի հիմնադրույթների հաստատմանն ու վերլուծվող նյութի լիարժեք բացահայտմանը: Համակարգային ու համադրական վերլուծության մեթոդը բերում է ներքին կապակցումների բացահայտման մեծ հնարավորություն, ընդ որում՝ ոչ միայն տեքստային, այլև արտատեքստային, որով շրջանակված է հեղինակի կյանքն ու գործը:

* Ներկայացվել է 03. III. 2025 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

Գասպարյանի ոճի կարևոր բաղադրիչներից է խոսքի սեղմությունը, որը գալիս է մտածողության արագությունից ու համադրականությունից, կարևորն ու լրացուցիչը առանձնացնելու և ամեն ինչ իր տեղում ամբողջությամբ բացահայտելու հմտությունից: Այստեղ և՛ արագությանը նպաստող թռիչքաձև մտածողությունն է, և՛ աննկատ մնացած մանրամասների գեղեցկությունը:

Այս ամենը պահանջում է նյութի համակողմանի իմացություն, որը գրադարաններում, արխիվներում ու թանգարաններում ձեռք է բերվում դժվար աշխատանքով: Դա նաև պայմանավորված է նրանով, որ, ըստ Գասպարյանի, ինչ պահանջ գրականագետը դնում է գրողի առջև, նույնը պետք է պահանջի նաև իրենից՝ սկսած լեզվից ու արդիական մտածողությունից մինչև նյութին տիրապետելու լիարժեք կարողությունը: Եվ իրավացի է հետազոտողը, երբ աշխույժ ու պատկերավոր կենդանի լեզուն տարբերակում է եզրույթներով խեղդված սխեմատիկ և ըստ ամենայնի մեռած լեզվից: Գասպարյանի ոճի գրավչությունը պայմանավորված է այդ կենդանի լեզվով:

Որպես գրականագետ՝ նա ստեղծում է տվյալ հեղինակի կենդանի կերպարը, գեղարվեստական երկի բացահայտման բնական միջավայրը: Իսկ այս ամենի հիմքում պատմականությունն է, պատմական հայացքը, ինչն էլ խորքից կարգավորում է վերլուծվող նյութի ներքին ճարտարապետությունը:

Ինչպես գրախոսվող գիրքը, այնպես և նախորդները ունեն ընդգրկված ուսումնասիրությունների ու հոդվածների խմբավորման ընդհանուր առմամբ միանման կառուցվածք՝ «Գրականության պատմություն», «Պատմություն և արդիականություն», «Տեսական-գեղագիտական հարցադրումներ», «Գրական քննադատություն», «Դիմանկարներ և ուրվագծեր», «Ետադարձ հայացք», «Բաց պատուհան», «Հարցեր և պատասխաններ»: Առկա է նաև «Հավելված» բաժինը՝ աղբյուրագիտական նշանակություն ունեցող բնագրերի հրապարակումներով: Այստեղ «Պարույր Սևակի կյանքն ու մահը» փաստական կարևոր նշանակություն ունեցող հուշագրությունն է:

Առանձին երկերի ուսումնասիրությամբ գրքում ներկայացված են Ռաֆֆին, Պ. Դուրյանը, Համաստեղը: Ի դեպ, նախորդ հատորներում այս շարքում են Լ. Շանթը, Հ. Օշականը, Կ. Ջարյանը, Ռենը (Ռուբեն Վարդանյան), Վ. Սարոյանը, Ե. Չարենցը, Ա. Բակունցը (գիրք I), Սայաթ-Նովան, Պ. Դուրյանը, Վ. Թեքեյանը, Ռ. Սևակը, Մ. Ջարիֆյանը, Հ. Թումանյանը, Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Գ. Մահարին, Խ. Դաշտենցը, Լ.-Ջ. Սյուրմեյանը, Հ. Շիրազը, Հ. Սահյանը, Հ. Կարապետցը, Ա. Կիրակոսյանը, Մ. Գալշոյանը, Ռ. Դավոյանը, Ջ. Գազանճյանը, Մ. Պաքսյանը, իրանահայ բանաստեղծները, օտարագիր հայ գրողները, Ա. Հարությունյանը, Ա. Համբարձումյանը (գիրք II), Կարա-Դարվիշը, Լեռ Կամսարը, Հ. Սահյանը, Պ. Սևակը, Ա. Ալիքյանը, Գ. Էմինը, ժամանակակից բանաստեղծներն ու արձակագիրները (գիրք III), Խ. Աբովյանը, Ջիվանին, Սիամանթոն, Դ. Վարուժանը, Վ. Տերյանը, Լեռ Կամսարը, Հ. Կոստանդյանը, Գ. Մահարին, Պ. Սևակը, Մ. Սարգսյանը, Սոնա Վանը (գիրք IV), Յ. Իսանգադյանը, Մ. Պաքսյանը, ժամանակակից գրողները (գիրք V), Վ. Տերյանը, Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Ն. Ջարյանը, Հ. Սահյանը, Հ. Մաթևոսյանը և 1960 ականների մյուս արձակագիրները (գիրք VI):

Նորից հանդիպող հեղինակները ներկայացվում են միանգամայն նոր բացահայտումներով, կրկնությունը բացառվում է: Անունների այս փունջը թեև դեռևս ամբողջը չէ, բայց տպավորիչ մի շարք է, որ սերունդներ կարող է կրթել, տալ գրականության իմացություն և ճաշակ, սովորեցնել երկն ընկալելու ու վերլուծելու արվեստը, այսինքն՝ ամբողջական կերպարով ճանաչել գրողին:

Գրախոսվող գրքում առանձին քննության նյութ են դարձել հայկական վերածննդի ու կլասիցիզմի, ստալինյան բռնությունների ու հայ գրողների ճակատագրի, Հայրենական պատերազմի տարիներին ստեղծված գրականության հարցերը:

Առանձնահատուկ պետք է անդրադառնալ ստալինյան բռնությունների և հայ գրողների ճակատագրերի մասին հողվածներին: Դ. Գասպարյանն առաջինն էր, որ դեռևս 1980-ական թվականների վերջերին, այսպես կոչված, հրապարակաչնության ու ազատամտության առաջին իսկ տարիներին, արխիվներից հանեց և ժողովրդի սեփականությունը դարձրեց բազմաթիվ վավերագրեր, որոնք լույս սփռեցին պատմության մութ ծայքերի վրա և բացահայտեցին հայ գրողներին վիճակված այդ նոր դժոխքի իրական պատկերը: Նա հայտնաբերեց և հրապարակեց ոչ միայն վավերագրեր, այլև գեղարվեստական անտիպ ժառանգություն, որոնք էպպես փոխեցին պատկերացումները ժամանակի և ժամանակակիցների վերաբերյալ: Այդ նյութերի հրապարակումից ու հանրայնացումից հետո տարբեր մտավոր ժամանակներ են և այլևս անհնար է առաջնորդվել հին պատկերացումներով: Իսկ դա նշանակում է, որ ընձեռված նոր հնարավորությունները ճիշտ օգտագործելով՝ Դ. Գասպարյանը մտավոր հեղաշրջում կատարեց, և սա երբեք պետք չէ մոռանալ:

Դեռևս 1988-ից հրապարակած հողվածներից հետո՝ 1994-ին, նա հրատարակեց «Փակ դռների գաղտնիքը» գիրքը, որի հարցադրումները, ահա, շարունակում ու լրացնում են այս գրքում զետեղված «Ստալինյան բռնաճնշումները և հայ գրողների ճակատագիրը», «Չարենցը, Բակունցը և մյուսները», «Ստալինը վերադառնում է» հողվածները:

Ինչպես նախորդ, այնպես և այս գրքում Գասպարյանի գլխավոր «գրական հերոսը» Եղիշե Չարենցն է: Գնահատելով գրականագիտության նախկին ձեռքբերումները՝ անվանի ուսումնասիրողը չարենցագիտությունը դուրս բերեց միանգամայն նոր ասպարեզ, որը պայմանավորված է ինչպես արխիվային նոր նյութերի հայտնաբերմամբ, այնպես և Չարենցի խորքային ստեղծագործությունների նոր ընթերցումով: Վեցերորդ գրքում մանրակրկիտ քննությամբ նա ցույց տվեց, որ «Ամբոխները խելագարված» և «Սոմա» պոեմները ոչ թե սոսկ հեղափոխության երգեր են, այլև Հայաստանի պետականության վերականգնման օրհներգեր, «Չարենց նամե», «Ստամբոլ» պոեմում բացահայտեց ռուս-թուրքական դաշինքի ամբողջ կործանարարությունը հայ ժողովրդի համար: Այս վերլուծումներից հետո կոպիտ սխալ է կառչած մնալ խորհրդային տարիներին շրջանառության մեջ դրված ձևակերպումներին: Եվ լավ է, որ Գասպարյանն է խմբագրում Չարենցի գիտական հրատարակության նոր հատորաշարը:

Գրախոսվող գրքում նոր հարցադրումներ են պարունակում «Գրական Երևան. 1910-1930-ական թվականներ», «Խորհրդային Հայաստանի պետական-պաշտոնական հյուրերը» ուսումնասիրությունները:

Հետաքրքրական են ինչպես այս, այնպես էլ նախորդ գրքերում տեղային նշանակությամբ ի մի բերված նյութերը. «Գրական Երևան»-ն ու «Գրական Արցախ»-ը, «Գրական Սյունիք»-ն ու «Գրական Վան-Վասպուրական»-ը: Սա էլ գրական նյութը ներկայացնելու մի նոր դիտակետ է: Այստեղ առանձնահատուկը նյութն է, բարբառն է, բնաշխարհն է, պատմության հետազիծն է: Հետաքրքրական կլինի այս տեսանկյունով գրել նաև «Գրական Թիֆլիս», «Գրական Կոստանդնուպոլիս», «Գրական Բեյրութ» ուսումնասիրությունները և սեղմ ուրվագծերով ցույց տալ այդ բնակավայրերի գրական քարտեզը:

«Բաց պատուհան» խորագրի ներքո հեղինակն առանձնացնում է դասական ու ժամանակակից արտասահմանյան գրականությանը նվիրված հետազոտությունները: Այստեղ գետնդրված են հետևյալները՝ «Արվեստի փառքը», «Հավերժական շարժիչ» (Զիակունո Կազանովայի «Իմ կյանքի պատմությունը» հուշավեպը), «Դավիթ Խրոյանի կյանքի գլխավոր գործը» (նվիրված անգլիագիր հայ գրողի «Ճանապարհ տնից» վեպին), «Մահվան ֆուգա» (Գաբրիել Գարսիա Մարկեսի «Նահապետի աշունը» վեպը), «Բատյայի կրտսեր որդին» (ուկրաինացի այլախոհ Վասիլ Ստուսի պոեզիան), «Արաբական աշխարհի վեպը» (եգիպտացի գրող Ալասա ալ-Ասուանիի «Յակոբյան շենքը» վեպը): Այս վերլուծականները նվիրված են նշված գրողների համապատասխան երկերի հայերեն թարգմանություններին: Հեղինակը քննում է նաև արվեստի հարցեր:

«Հայ գրականություն» գրքի յոթերորդ հատորը բավականին հարուստ գեղարվեստական մի աշխարհի շատ անհրաժեշտ ու խոր անդրադարձ է, որին զուգահեռ հայ գրականությունը երևում է իր կապերով ու ազդեցություններով, ընդհանրություններով ու ձեռքբերումներով: Այս բնույթի վերլուծականներում նաև պարզվում է հայ գրականության պատկերը համաշխարհային գեղարվեստական մարտահրավերների տեսադաշտում: Այստեղ և՛ ավանդույթի ձգողական ուժն է, և՛ նորարարության գայթակղությունը, որոնց արդյունավետ համադրումն էլ նորոգում է ազգային գրականությունների գեղարվեստական ընթացքը:

Տպավորիչ է Մարկեսի վեպերի վերլուծությունը մոզական ռեալիզմի հոչակված գեղարվեստական մեթոդի գործադրմամբ: Հարակից կոլումբիացի գրողի տեսական դատողություններն են, իր կենսագրական փաստերի մանրամասները, որոնք ամբողջությամբ հյուսում են համաշխարհային փառքի հասած այդ ինքնատիպ գրողի կերպարը: Բացահայտվում է մոզական ռեալիզմի մոզականության գաղտնիքը, որի հիմքը չափազանցությունն է, առասպելաբանությունն ու հեքիաթը: Իսկ շարադրանքին թև տվողը պատկերավոր խոսքն է, Կարիբյան ավազանի բնիկների ու եկվորների կենսաբանության իմաստությունն է: Պատումի գրավչությունը նաև կենցաղի ու սովորույթների վառ նկարագրությունն է: Գրականագետն ահա այսպես հմտորեն բացահայտում է լատինաամերիկյան գեղարվեստական այս նոր ալիքի տեսական-գեղագիտական առանձնահատկությունները, որոնք հեղաշրջիչ նշանակություն ունեցան համաշխարհային գրականության

մեջ՝ ասպարեզ հանելով Նորբեյյան մրցանակակիր մի քանի գրողների և հաստատելով լատինաամերիկյան վեպի երևույթը:

Անկախ տվյալ հոդվածի հարցադրումների նպատակային ուղղվածությունից՝ Դ. Գասպարյանը միշտ առաջնային է համարում բարձր արվեստի պահանջը, որն էլ հենց արվեստի գոյության նախապայմանն է: Այս դիրքորոշումով են գրված գրախոսվող գրքի «Ետադարձ հայացք», «Մարդը», «Հանրակրթություն և ազգային վիճակ», «Հողմաշունչ ժամանակներ», «Ժամանակի ձայնը. անդրադարձներ» բաժինների նյութերը:

Նախ՝ չափանիշը, ապա՝ միայն գնահատությունը. այդպե՛ս, որովհետև հակառակ դեպքում թույլ ու երկրորդական գեղարվեստական երկն անգամ կարելի է քննել և ներկայացնել այնպես, որ գրավի առաջինի տեղը: Վերջին տասնամյակների մեր գրական կյանքում այդպիսի օրինակները շատ են, որով և պայմանավորված է գրական ընթացքի խառնաշփոթը: Գասպարյանն այս հարցերը սուր ընկալմամբ է բացահայտում, որովհետև շատ կարևորում է արվեստի, այս դեպքում՝ բարձր գրականության հոգեկերտիչ դերը:

Այս դիրքորոշմամբ անվանի գիտնականը իր երևացող տեղն ունի ժամանակակից գրական ընթացքի մեջ: Գրականությանն առնչվող իր սկզբունքները պաշտպանելու նպատակով նա բազմիցս մտել է բանավեճերի մեջ. մեկ քննարկվել են ժամանակակից արձակի ու պոեզիայի հարցերը, մեկ տարբեր տեսանկյուններից լուսաբանվել է գրողի առանձին գրական մի ստեղծագործություն կամ գիրք, մեկ ճշգրտվել է մոտակա պատմական անցյալի նկատմամբ ժամանակակից հայացքը, մեկ հերթական անգամ քննվել է գրական քննադատության տեղի ու դերի հարցը: Առանձին հոդվածներով դրանք կամ դրանց արձագանքները կան նաև ներկայացվող գրքում («Մոլախոտը շատ է», «Մտավոր դեղնախոտ», «Վրիպակի հերթական զոհը» և այլն):

Արագ զարգացումների մեր այս զարմանալի դարում կայուն են մնում միայն հոգևոր ու պատմական հաստատուն արժեքները, որոնցով էլ պահպանվում ու զարգանում է ազգային հոգեկերտվածքը: Այս հարցերի քննարկումների ժամանակ Գասպարյանը միշտ հեռու է եղել ձևից ու ձևականությունից և հարցերին տվել է միմիայն գեղարվեստական զարգացման պատմական տրամաբանությունից բխող հիմնավոր պատասխաններ:

Ահա այս ամենով ստեղծվում է քննադատի գրական կերպարը: Բուն քննադատությամբ զբաղվողներից պատմական ոչ հեռու ժամանակի մեջ տեսնում եմ Նիկոլ Աղբալյանին, Հարություն Սուրխաթյանին, Պողոս Մակինցյանին, Հակոբ Օշականին, Պողոս Մնասյանին: Մոտիկ տարածության վրա Գասպարյանի անմիջական նախորդներն են ... Գասպարյանը շարունակում է նրանց լավագույն ավանդույթները, որը առաջին հերթին ուսումնասիրվող հեղինակի կյանքի ու գործի համակողմանի հետազոտական բնույթն է, ծայրահեղ ուշադրությունը տողի ու բառի հանդեպ: Անպայման նաև խորապես արդիական հայացքը, որ պայմանավորվում է գիտության զարգացմամբ, մարդու իմացության և դրանով պայմանավորված՝ մտածողության թարմությամբ:

Թեև մեր իրականության մեջ քննադատի վաստակն այնպես չի գնահատվում, ինչպես գրողինը, որովհետև քննադատից միայն պահանջում են ու նաև դժգոհում, թե ինչու իրենց չի անդրադառնում, ինչու մեկին գնահատեց, իսկ իրենց՝ ոչ, բայց, թեկուզ այդ տեսադաշտում, ներքին լուռ գնահատությունն առկա է և լավ գիտեն, թե ով է նա իր ասպարեզում: Դ. Գասպարյանն այդ լուռ գնահատվածներից է, որի շենքուշնորհքով քննադատությունը վերջնականապես դարձրեց լինել որպես գրականության հավելված և գրական կյանքում պահպանեց մասնագիտական իր բարձր արժանապատվությունը:

Մեր առջև ստեղծագործական բուռն ու հարուստ ճանապարհ անցած գրականագետ Դավիթ Գասպարյանի «Հայ գրականություն» մատենաշարի հերթական՝ յոթերորդ գիրքն է՝ որպես հերթական հաջողություն:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Բ. գ. թ.: Գիտական հետաքրքրությունները՝ Վահան Թեքեյան, արևմտահայ պոեզիա, արվեստագիտություն: Հեղինակ է 6 գրքի և շուրջ 100 հոդվածի:
tamara2cthis@gmail.com, tamara@collectors-galleries.com*